

«Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի օգոստոսի 11-ի N 287-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագիծ.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 287-Ն

ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N 2459-167 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի օգոստոսի 11-ի «2022-2023 թվականների որսի կենդանիների ցանկը, դրանց օգտագործման թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին» N 287-Ն հրամանի հավելվածի`

- 13-րդ կետի «օգոստոսի 27-ից մինչև 2023 թվականի փետրվարի 12-ը» բառերը փոխարինել «նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 18-ը» բառերով,
- 16-րդ կետի «20» թիվը փոխարինել «35» թվով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Հ. ՄԻՄԻԴՅԱՆ

« » 2022թ.

ք. Երևան